# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
# ՀՆԱԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Հնաբերդ համայնք
Հեռ.098025050, hnaberd.ararat@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 սեպտեմբերի 2020 թվականի N 24

## ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետով,համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել Հնաբերդ համայնքի ավագանու 2020 թվականի թիվ 08 արտահերթ նիստի օրակարգը.

<< Համայնքային սեփականություն հանդիսացող գույքը Հայաստանի Հանրապետությանը նվիրելու մասին>>:

Կողմ -3 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՕՖԻԿ

ԹԱՎՐԵԶՅԱՆ ՆԻԿՈԼԱՅ

ՄԻՆԱՍՅԱՆ ՍԵԴԱ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՄԱՐՏ ՊՈՂՈՍՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
## ՀՆԱԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության
Արարատի մարզի Հնաբերդ համայնք
հեռ. 098025050, էլ.հասցե hnaberd.ararat@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 սեպտեմբերի 2020 թվականի N 25

### ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՆՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով Հնաբերդի համայնքի ղեկավարի առաջարկությունը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական Օրենսգրքի 605-րդ և Հողային Օրենսգրքի 75-րդ հոդվածների,<<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ կետի և 37-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներով,համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.ՀՀ Արարատի մարզի Հնաբերդ համայնքի վարչական տարածքում Խ.Աբովյան փողոց թիվ 2 հասցեում գտնվող բնակավայրերի հասարակական կառուցապատման համայնքի սեփականություն հանդիսացող 941.74 քառ.մ. ընդհանուր մակերեսով շինությունները՝ այդ թվում՝ դպրոցի շենք՝ 913.48 քառ.մ.,ենթակայան՝ 15.66 քառ.մ.,կաթսայատուն՝ 12.6 քառ.մ.,ինչպես նաև դպրոցի զբաղեցրած և սպասարկման համար տրամադրված 0.74673 հա. հողամասը /վկայական N05112015-03-0050/ նվիրել Հայաստանի Հանրապետությանը՝ պայմանով,որ գործող դպրոցի զբաղեցրած ներկայիս տարածքի փոխարեն համայնքին սեփականության իրավունքով տրամադրվի համայնքի դպրոցի նախկին չօգտագործվող շենքը և հարակից հողամասը:

2. Ուժը կորցրած ճանաչել համայնքի ավագանու 26.09.2017 թվականի թիվ 26 որոշումը:

3.Սույն որոշումից բխող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

Կողմ -3 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՕՖԻԿ

ԹԱՎՐԵԶՅԱՆ ՆԻԿՈԼԱՅ

ՄԻՆԱՍՅԱՆ ՍԵԴԱ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՄԱՐԱՏ ՊՈՂՈՍՅԱՆ